Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետի 2017թվականի երկրորդ կիսամյակի և տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ.

2018թ հունվարի 22-ին, ժամը 12-00-ին տեղի ունեցավ Ակնաշենի համայնքապետի 2017 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետու նիստը:Նիստին ներկա էին Արմավիրի մարզպետարանի ՏԻ և համայնքային ծառայության բաժնի պետ՝Գոռ Հովհաննիսյանը, ավագանու անդամներ՝Գագիկ Խուրշուդյանը,Աշոտ Գևորգյանը,Գարիկ Հովհաննիսյանը,Միհրան Ներսիսյանը,Զավեն Արշակյանը և համայնքի 63 (վաթսուներեք) բնակիչներ:

Զեկուցող համայնքապետ՝ Միսակ Միսակյան.

2017 թվականի տարեկան բյուջեով նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտ՝**37723.7** հազար դրամ,այդ թվում՝

1. Հողի հարկից եկամուտ՝ **4312.2** (Չորս միլիոն երեք հարյուր տասներկու հազա երկու հարյուր) հազար դրամ.
2. Գույքահարկ՝**5043.0** (հինգ միլիոն քառասուներեք) հազար դրամ.
3. Տեղական տուրքեր՝**195.0** (մեկ հարյուր իննսունհինգ) հազար դրամ.
4. Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճար՝**578.8** (հինգ հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր) հազար դրամ.
5. Ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին հատկացվող Դոտացիան կազմել է՝ **27594.7** (քսանհյոթ միլիոն հինգ հարյուր իննսունչոր հազար յոթ հարյուր) հազար դրամ.

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է **1117.7**(մեկմիլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր) հազար դրամ.

2017 թվականի երկրորդ կիսամյակի վարչական բյուջեի եկամուտների

պլանը կազմել է 18120.3(տասնութ միլիոն մեկ հարյուր քսան հազար երե հարյուր) հազար դրամ: Փաստացի եկամուտները կազմել են՝ 17146.3(տասնյոթ միլիոն մեկ հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր) հազար դրամ:

Երկրորդ կիսամյակում եկամուտների պլանը կատարվել է 94.6 % ու տարեկանը՝ 100.1 այդ թվում համապատասխանաբար՝

ա/Հողի հարկի գծով՝ 85.4%.

բ/Գույքահարկի գծով՝ 116.0%.

գ/ Տեղական տուրքերի գծով ՝ 109.8%.

դ/.Համայնքի սեփականություն համարվող հողերից վարձավճարի գծով 85.2%.

ե/ Դոտացիայի գծով ՝ 100 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակի սեփական եկամուտների պլանը 2016 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել ՝ է 788.0 հազար դրամով, փաստացի սեփ.եկամուտները ավելացել ՝ է՝ 1263.1 հազար դրամով,

2017 թվականի տարեկան սեփական եկամուտների պլանը 2016 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել ՝704.2 հազար դրամով,այդ թվում՝

Հողի հարկի փաստացի եկամուտը 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ ավելացել է 1488.0 հազար դրամով,գույքահարկի գծով ավելացել է 3034.1 հազար դրամով,վարձավճարը ավելացել է 236.1 հազար դրամով, տեղական տուրքերի գծով ավելացել է՝30.0 հազար դրամով:

2017թվականին կատարվել են հետևյալ ծախսերը՝

ա/ Աշխատավարձ՝ 17902.2 հազար դրամ.

բ/Էներգետիկ ծառայություններ՝ 2750.0 հազար դրամ.

գ/Կապի ծառայություններ՝ 239.3 հազար դրամ.

դ/Տրանսպորտի վարձակալություն ՝ 960.0 հազար դրամ.

ե/Ներքին գործուղումներ՝137.0 հազար դրամ.

զ/համակարգչային ծառայությունների համար՝271.2 հազար դրամ.

է/Տեղեկատվական ծառայություններ՝198.2 հազար դրամ.

ը/Ներկայացուցչական ծախսեր՝1362.8 հազար դրամ.

թ/Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝2455.9 հազար դրամ.

ժ/Մասնագիտական ծառայություններ՝666.4 հազար դրամ.

ի/Գրասենյակային նյութեր՝438.6 հազար դրամ.

լ/Տրանսպորտային նյութեր՝396.0 հազար դրամ.

խ/Կենցաղային և հանր. Սննդի նյութերը՝ 837.7 հազար դրամ.

ծ/ Հատուկ նպատակային այլ նյութեր՝ 1533.8 հազար դրամ.

կ/Ընթացիկ դրամաշնորհներ՝ 1283.3 հազար դրամ.
հ/Գրքերի ձեռք բերման համար՝ 165.0 հազար դրամ.
ձ/Ջրի պոմպերի ձեռք բերում՝ 800.2 հազար դրամ.
ղ/ Նախագծահետազոտական ծախսեր՝ 218.0 հազար դրամ.
ճ/Կոմունալ ծախսեր՝ 1200.0 հազար դրամ.
մ/Պարտադիր վճարներ՝ 78.5 հազար դրամ.
ն/Տնկիների ձեռք բերման համար՝ 0.0 հազար դրամ.
շ//Ջրամատակարարման ծախսեր՝ 300.0 հազար դրամ.
ո/Շենք և շինութ ընթացիկ .նորոգման ծախսեր՝ 568.0 հազար դրամ.
չ/Սոցիալական օգնություն՝ 2715.0 հազար դրամ (Սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է սոց օգնություն):

2017 թվականին ստացվել է 288/երկու հարյուր ութանասունութ/,ուղարկվել՝233 /երկու հարյուր երեսուներեք/ փաստաթուղթ. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 9 նիստ, ընդունվել է 51 որոշում , ղեկավարի՝ 63 որոշում արձակվել՝ 18 կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 51 հրաման.
Քաղաքացիներին տրվել է 817 տեղեկանք:
Քաղաքացիներից ընդունվել է 108 դիմում:
Տրվել է շինարարության 5 թույլտվություն:

Չնայած կատարված աշխատանքներին՝ համայնքում կան չլուծված խնդիրներ՝
1. Խմելու ջրի ջրագծերի նորոգում.
2 Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում.
3. Կարեն Դեմիրճյան և Օզանյան փողոցների գազաֆիկացում:
4. <<Շորղարա>> հանդամասի շուրջ 40 հա. վարելահողի ոռոգման ջրի հարցը/հորատել մեկ խորքային հոր/:
5. Հիմնովին նորոգել և շահագործել մանկապարտեզը:

Ակնաշենի համայնքապետ՝ /Մ.Միսակյան/

Աշխատակազմի քարտուղար՝ /Խ.Հովակիմյան/

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետվությունից.

Գ .Ակնաշեն

2018 թվականի հունվարի 22-ին , ժամը 14-00 ին,կայացավ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետվությունը: Հաաշվետվությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և Համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը, ավագանու անդամներ՝ Գագիկ Խուրշուդյանը , Աշոտ Գևորգյանը ,Գարիկ Հովհաննիսյանը, Միհրան Ներսիսյանը, ,Զավեն Արշակյանը և Ակնաշեն համայնքի 63 բնակիչներ:

Համայնքի ղեկավարը հանգամանալից ներկայացրեց 2017 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան հաշվետվությունը՝ կատարած աշխատանքների մասին: Ակնաշեն համայնքի ավագանու անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին և համայնքի ղեկավար ՝Միսակ Միսակյանին, համայնքում կատարած աշխատանքների համար:

Համայնքի Այգեգործների փողոցի բնակիչ՝Վալերիկ Սարիբեկյանը ,փողոցի բնակիչների անունից, շնորհակալություն հայտնեց մարզպետին և պատգամավոր Սեյրան Սարոյանին, որոնց ամնիջական օժանդակությամբ նորոգվեց դպրոցի և իրենց փողոցի ընդհանուր կոյուղագիծը:

Համայնքի Կ.Դեմիրճյան փողոցի բնակիչները կրկին հարց բաձրացրեցին և խնդրեցին լուծել իրեց փողոցի գազաֆիկացման խնդիրը,որն ամեն տարի<<ԳազպրոմԱրմենիա>> ՓԲԸ-ից և Մարզպետարանից խոստանում են ընդառաջել,բայց աշխատանքներ չեն կատարում: Համայնքի բնակիչների կողմից կրկին հարց բարձրացվեց լուծելու <<Շորղարա>> կոչվող հանդամասի շուրջ 40 հա. վարեահողի ոռոգման խնդիրը և դիմեցին խնդրել Արմավիրի մարզպետին ՝ընդառաջելու նշված հանդամասում հորատելու 1/մեկ/ խորքային հոր,որով կլուծվի ոռոգման ջրի խնդիրը::

Արձանագրությունը կազմեց՝ Ակնաշենի համայնքապետարանի

աշխատակազմի արտուղար՝ Խ.Հովակիմյան

Ակնաշեն համայնքի ղեկավար՝ Մ.Միսակյան